Ս. ՇՏԻԿՅԱՆ

ՀԱՄԱՌ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

(Արամ Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Արամ Ղանալանյանը հայ մշակույթի այն երախտավորներից է, որոնց համար տեղին կլիներ կրկնել Գորկու հայտնի ասույթը. «Նրանք աշխատում են հանգիստ, անշշուկ, կարծես վախենալով իրենց գոյությունը հիշեցնել անգամ: Բայց նրանք անում են գործ, որի կողքից առանց գլխարկ հանելու չի կարելի անցնել»: Արամ Ղանալանյանն էլ իր ամբողջ կյանքում ատեց մեծարման հանդեսներն ու գովաբանական ճառերը, հավակնոտ ինքնահայտարարումն ու գրական քուրմի կեցվածքը: «Գրականության համեստ մշակ», – այս է ամենահարմար բնութագրականը, որը կարելի է տալ նրան:

Բանասիրությունը Ղանալանյանի հավատո հանգանակն էր դեռ շատ վաղուց: Դեռ հայրենի քաղաքում՝ Ախալցխայում սովորելիս, ապա՝ Երևանի պետական համալսարանի պատմա-գրական ֆակուլտետում ուսանելիս, նա ագահորեն լսում ու գրի էր առնում այն ամենը, ինչ կապ ուներ ժողովրդական ստեղծագործության հետ: Վճռական խոսքն ասելու պատիվը, սակայն, վերապահվեց մեր մշակույթի մեծերից մեկին՝ Մանուկ Աբեղյանին: Հին մանկավարժի փորձառու աչքը իսկույն նկատեց իր ուսանողի այդ տարապայման սերը դեպի ժողովրդական բառ ու բանը և, ինչպես ասում են, «ձեռքը դրեց» նրա վրա: Ահա թե ինչու, երբ Ղանալանյանը 1931 թվականին ավարտեց համալսարանը, նրա ապագան արդեն որոշակի էր. նա դարձավ Աբեղյանի ասպիրանտը ժողովրդական բանահյուսության գծով:

Իրար հետևից անցան համառ աշխատանքով լի տարիները: 1932 թվականին Ղանալանյանն աշխատանքի անցավ Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում, իսկ երկու տարի անց՝ 1934 թ. հրավիրվեց համալսարան, որպես «Հայկական ժողովրդական բանահյուսություն» առարկայի դասախոս: Ղանալանյանը հնարավորություն ունեցավ անմնացորդ նվիրվել գիտության՝ իր սիրած բնագավառին: Պարբերականներում ու ժողովածուներում իրար հետևից սկսեցին հանդես գալ նրա մեծ ու փոքր հոդվածները, նվիրված հայ բանասիրության այլևայլ հարցերին, որոնք ակնառու կերպով վկայում էին, թե որքան խոր գիտելիքներ և տեսական ինչպիսի պատրաստություն ուներ դրանց հեղինակը:

1937 թվականին հրատարակվեց Արամ Ղանալանյանի առաջին ծավալուն աշխատանքը, որն ուներ «Հայ շինականի աշխատանքի երգերը» հաջող գտնված խորագիրը: Հավաքելով ու

դասդասելով աշխատանքային երգերը, տալով դրանց բնութագրականները, բացահայտելով նրանց տեղն ու դերը ժողովրդի հոգևոր կյանքում, այդ բոլորի հենքի վրա անելով իր ուշագրավ, հաճախ համարձակ եզրակացությունները, Ղանալանյանը ընթերցող ու գիտական հասարակայնության սեղանին դրեց արժեքավոր մի աշխատություն, որը նշանակալից երևույթ է բանագիտական գրականության գանձարանում։ Այս բոլորից թերևս ամենակարևորը՝ Մանուկ Աբեղյանի դրվատական կարծիքն էր գրքի մասին, որը նա հայտնել էր տարբեր առիթներով։ Կարիք կա՞ ասելու, թե ինչպես էր ուրախանում երիտասարդ Ղանալանյանը։

Այնուհետև իրար հաջորդեցին մի քանի աշխատություններ, որոնք հռչակեցին Արամ Ղանալանյանին որպես հայկական բանահյուսության ճանաչված մասնագետ։ Դրանցից՝ «Խորհրդային հայկական ֆոլկլորը» (1938 թ.), «Պռոշյանը և ժողովրդական ստեղծագործությունը» (1938 թ.), «Աբովյանը և ժողովրդական ստեղծագործությունը» (1941 թ.), «Սասունցի Դավիթ» էպոսը» (1939 թ.) և այլն – մեր ասածի լավագույն ապացույցներն են։ Այս ամենն էլ հիմք տվեց Մանուկ Աբեղյանին «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյանական համահավաք տեքստի պատրաստման աշխատանքներում ոչ միայն ընդգրկել Արամ Ղանալանյանին, իբրև ձեռնհաս և կարող մասնագետի, այլև նրան հանձնել «Դավիթ և Խանդութ» և «Փոքր Մհեր» ճյուղերը մշակելու և հրատարակության պատրաստելու համար։ Ավելորդ է ասել, թե ինչպիսի ջանասիրությամբ գործի անցավ Ղանալանյանը, և ինչպիսի՝ հիացնող բարեխղճությամբ գլուխ բերեց իրեն վստահված ամենևին էլ ոչ հեշտ գործը։ Այդ աշխատանքի համար հատկապես՝ «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի պատրաստման գործում ցուցաբերած եռանդի և ակտիվության համար, Ղանալանյանը պարգևատրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի պատվոգրով։

Արածը շատ էր, անելիքները՝ ավելի շատ, և Արամ Ղանալանյանը նոր ուժով գործի անցավ։ 1942 թվականին հրատարակված «Հայկական ժողովրդական հերոսապատումները» և մի քանի տարի անց՝ «Թշնամու կերպարը հայկական բանահյուսության մեջ» աշխատությունները ցույց են տալիս, որ հեղինակը իր ինքնուրույն ասելիքներն ունի նաև պատմական ֆոլկլորի պոետիկայի բնագավառում։ Իսկ վերոհիշյալ բնույթի թեմաների բարձրացնելն առավել անհրաժեշտ էր, ու ժամանակին, որովհետև աշխարհ էր եկել 1941 սարսափելի թվականը, և հիտլերյան դարչնագույն հորդաները խուժել էին սովետական հողը։ Ղանալանյանի ուսանողներից շատերը եղան, որոնք ուսանողական ինքնահոսը փոխարինեցին հրացանով և մեկնեցին արյան ու պատվի սուրբ դաշտը՝ գուպարելու թշնամու հետ։ Շատերը նրանցից

վերադարձան, ավելի շատերն էլ՝ այրող հուշ դարձան Ղանալանյանի հոգում և սպիտակ մազ ավելացրեցին գլխին... Ահա թե ինչու այնպես անհրաժեշտ էին հայկական ժողովրդական հերոսապատումները ընթերցողին ներկայացնելը, հանուր-հանուրին ցույց տալու համար, որ ուրիշ ազգերի պես՝ հայն էլ չի հանդուրժել բռնությունն ու բռնացողին և միշտ էլ պատրաստ է եղել՝ նրանց դեմ ոտքի ելնելու համար։

Ղանալանյանի աշխատանքներն ավելի նպատակադիր են դառնում 1943 թվականից սկսած, երբ նա փոխադրվում է Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, սկզբում որպես ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչ, ապա՝ հրաժարվելով այդ պաշտոնից (1960 թ.), որպես ավագ գիտաշխատող։ Այդ ժամանակվանից սկսած, զանազան մեծ ու փոքր հոդվածներով ու ուսումնասիրություններով հանդես գալուն զուգընթաց, գիտնականը հիմնականում սկսում է զբաղվել արդեն տարիների պատմություն ունեցող իր աշխատությամբ, որը պետք է հանդես գար 1951 թվականին՝ «Հայկական առածանի» ընդհանուր խորագրով, և իրենով պետք է մի նոր աստիճանի բարձրացներ սովետական բանագիտությունը։

Նույնիսկ ընդհանուր գծերով, անգամ, դժվար է թվել դժվարությունների այն շարքը, որը պետք է հաղթահարեր Ղանալանյանը, սկսած գործը հաջողությամբ ավարտելու համար։ Նախ՝ անհրաժեշտ էր մեկ առ մեկ կարդալ ամբողջ հայ գրականությունը՝ հնից մինչև մեր օրերը, կարդալ հին ու նոր թարգմանությունները, պարբերականները, տպագիր և անտիպ բազում-բազմապիսի աշխատությունները, նրանցում եղած առածները դուրս գրելու համար, մի գործ, որի վիթխարիությունը հեշտ է պատկերացնել։ Ապա, ձեռքի տակ ունենալով այդ ահագին նյութը, պարզել, թե որն է նրանցից բուն առակը և որն է տարբերակը, ըստ այդմ էլ գրքում զետեղել նրանց, տալով համապատասխան մեկնաբանություններ։ Այնուհետև, անհրաժեշտ էր ճշտել առածների իմաստները, և հետևաբար՝ որոշել նրանց կիրառման աշխարհագրական ոլորտներն ու նպատակը։ Անհրաժեշտ էր պարզել նաև առածների «տարիքը», այսինքն՝ ճշտել, թե նրանցից որը որ դարից, իսկ եթե հնարավոր է նաև, տվյալ դարի որ թվականից է եկել-հասել մեզ։ Սա էլ իր հետևից բնականորեն բերում էր մեկ այլ, ոչ պակաս բարդ հարց. ինչն էր պատճառը, որ որոշ դարեր ամուլ են եղել առածների «արտադրության» տեսակետից, իսկ եղել են դարեր էլ, որոնք ապշեցնում են առածների՝ թե քանակական և թե որակական առատությամբ։ Եվ վերջապես, անհրաժեշտ էր..., բայց որը թվել։ Նման թվակումը կարելի է էլի շարունակել, իսկ այդ բոլորը գալիս է նորից հավաստելու, որ հայկական առածների համահավաքը պատրաստելու

աշխատանքը, մեղմ ասած, մեծ դժվարությունների հետ էր կապվում։ Եվ մոտ տասնհինգ տարվա լարված աշխատանք, Հայաստանի տարբեր շրջանները կատարվող մեկից ավելի գործուղումներ, հայ, ռուս, օտարազգի հեղինակների՝ համանման բնույթի հարյուրավոր աշխատությունների մանրակրկիտ ուսումնասիրություն պահանջվեց Ղանալանյանից «Հայկական առածանին» հաջողությամբ գլուխ բերելու համար։ Ահա թե ինչու գրքի հանդես գալուց հետո, կենտրոնական և ռեսպուբլիկական թերթերում իրար հաջորդեցին դրական գրախոսականները, իսկ «Հայկական առածանու» պահանջն այնքան մեծ եղավ, որ այն նոր հավելումներով ու լրացումներով վերահրատարակվեց երկրորդ անգամ՝ 1960 թվականին, նոր՝ «Առածանի» խորագրով։

Եվ չնայած գիրքն արդեն հրատարակվել էր և գերազանց հաջողությամբ բռնել քննությունը, բայց առածների հավաքման աշխատանքները Ղանալանյանը ամենևին էլ ավարտված չէր համարում։ Մեզ՝ Ղանալանյանին քիչ ավելի մոտ կանգնած մարդկանցս, քաջ ծանոթ է նրա «կապույտ ծոցատետրը»։ Բոլոր խոսակցություններում, ժողովներում, հարսանիքներում, ընկերական հավաքույթներում և այլ մարդաշատ տեղերում, որոնց, ի դեպ, Ղանալանյանն աշխատում է հնարավորին չափ շատ ներկա լինել, նա ուշադիր լսում է խոսողին, և ապա հանկարծ, մի տեսակ գաղտագողի մի կողմ քաշվելով, արագ հանում է գրպանից կապույտ ծոցատետրը, շտապ գրի է առնում ինչ-որ բան, ապա նորից մոտենում մյուսներին։ Եվ մենք բոլորս արդեն գիտենք. խոսողն առած ասաց, և Ղանալանյանը գրի առավ...

Մեծ աշխատանքն, իհարկե, պետք է բերեր իր վարձատրությունը, և այն չուշացավ։ Դեռ 1942 թվականին նա արժանացել էր բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի։ 1943 թվականին Ղանալանյանին շնորհվում է դոցենտի կոչում։ 1956 թվականին երկարատև ու անբասիր աշխատանքի համար գիտնականն արժանանում է «Պատվո նշան» շքանշանի։ Իսկ 1965 թվականի մարտին Գիտությունների ակադեմիայի նախագահությունը Ղանալանյանին ընտրում է ակադեմիկոս (թղթակից անդամ) հասարակական գիտությունների գծով։ Չենք հիշատակում բազմաթիվ պարգևատրությունները, խրախուսական մրցանակները, գիտական այլևայլ մրցույթներում առաջին տեղեր շահելը և այլն, որոնց թիվն այսօր մեկ տասնյակից ավելի է։

Պարգևներ շատ եղան, գովասանքներն՝ ավելի շատ, իսկ բոլորի հետևանքն այն եղավ, որ Ղանալանյանը դարձյալ մնաց նույն համեստ, գովասանք ու մեծարանք չսիրող գիտնականը, հոգատար, կարեկցող ընկերը, համառ աշխատավորը։ Այսօրվա հայագիտությունն իրենց ուսերին տանող շատ անվանի գիտնականներ կան, ովքեր եղել են Ղանալանյանի ուսանողները

և չթաքցված հպարտությամբ են խոսում իրենց դասախոսի մասին։ Արդեն հրատարակության է հանձնված գիտնականի մյուս կապիտալ աշխատությունը՝ «Հայկական ավանդապատում» խորագրով, ուր բազմավաստակ գիտնականը հավաքել, դասդասել ու ուսումնասիրել է շուրջ 1500 ավանդություններ։ Մի աշխատություն, որը կհանդիսանա սովետահայ բանագիտության ամենաբարձր նվաճումը։ Մնում է միայն ցանկանալ, որ Ղանալանյանը քաջառողջություն և երկարակեցություն ունենա, իրագործել կարողանալու համար իր մյուս մտահղացումը՝ «Հայկական երգիծապատումը», ուր պետք է հավաքվեն և ուսումնասիրվեն հայ ժողովրդի հին ու նոր երգիծապատումները, և որի վրա, ասենք որպես գաղտնիք, արդեն սկսել է աշխատել։ Մնում է ցանկանալ, վերջապես, որ Ղանալյանը արևշատություն ունենա, որպեսզի կարողանա թղթի վրա տեսնել իր այն բոլոր արժեքավոր մտահղացումները, որոնց կարիքն այնպես զգում է մեր բանագիտությունը։

Երեկոյան Երևան, 1969, № 36, փետրվարի 12